

ռաջին հանդէսն է մասնագիտական, որ աշխատում է ի մի հաւաքել արդէն կորստի վտանգին ենթարկուած ազգագրական նիւթերը: Ցանկալի, է որ այսուհետեւ հաւաքելի նիւթերն աւելի ճշտուած և լրիւ լինին:

Ա. Վ. Ղ.

«Մուճ»-ի ներկայ տարուայ №№ 2 եւ 3-ում «Ազգագրական Հանդիս» I—X գրքերի մասին տպագրուած գրախօսութեան առիթով *):

Արժ. Ա. Վ. Ղլրտճեանի վերոյիշեալ մատենախօսութիւնը ոչ միայն զուրկ է անաչառութիւնից, այլև լի է խեղաթիւրումներով, և եթէ ես պատասխանում եմ մի այսպիսի զրու-
թեան, այդ միայն այն պատճառով, որ այդ տպուած է ինձ համար համակրելի մի ամսագրում: Փաստերով ցոյց տամ ա-
սածներս.

Արժ. Ղլրտճեանը խեղաթիւրում է փաստերը: 1). Իմ «Համառօտ տեսութիւն Հայ-ազգագրութեան» յօդուածիս մէջ ես ասել եմ. «Ձեռնարկելով ներկայ հրատարակութեան՝ հարկաւոր ենք համարում մի համառօտ հայեացք ձգել հայ ազ-
գագրութեան այն սակաւաթիւ գոհարների վրայ, որ ազա-
տուել են ժամանակի ծախող ժանիքներից և լապա՝ «Սկսննք
ուրեմն մեր տեսութիւնը, սկիզբն առնելով գողթան երգերից
ու զրոյցներից**)...» իսկ յօդուածի վերջում Տես նաև Հանդի-
սիս առաջիկայ համարը: Սրանից միանգամայն պարզ երևում է,
որ այս յօդուածը դեռ չէ ւաւրտուած. դեռ Հասեմ, որ սրա
Ֆրանսիական թարգմանութեան մէջ սրա եռապատիկն է տը-
պուած***), որ սա միայն սկիզբն է՝ և այն էլ միայն գող-
թան երգերի մի երրորդը, մինչդեռ արժ. Ղլրտճեանը այս ցոյց
է տալիս ընթերցողին իբր հայ-ազգագրութեան ամբողջացած
տեսութիւն և դիտողութիւններ է անում, որ մեզ հա-
մար գոյութիւն չունին... Սրուանձտեան, Շերենց, Գ.
Հախվերդեան և մի շարք անուններ ****), Արտվանի և Պը-

*) Տպագրում ենք այս յօդուածը՝ հաւատարիմ լինելով *audiat et altera pars* սկզբունքին, մանաւանդ որ Ա. Վ. Ղ.-ի քննդատութեան փաստական կողմը թողել էինք իրա հեղինակի պատասխանատուութեան:

Ե. Խ.

**) Ազգ. Հանդ., I, եր. 7.

***) *La Revue des traditions Populaires*, 1895, №№ 4, 5, 6 և 7:

****) Այս անունները աւելի լրակատար յիշուած են պ. Գ. Խալաթեանի «Ծրագիր հայ ազգագրութեան» գրքի վերջին երեսում, այն ծրագրի, որի մասին մենք այնքան յայտարարել ենք՝ որպէս մի անհրաժեշտ ուղղեցոյց (Ազգ. Հանդ., I. գ. եր. 379. և II, III գրքեր):

նօշենի երկերը, որ մենք, չգիտենք, թէ մեր պարբերական հրատարակութիւնների մէջ կայ չափազանց մեծ նիւթ կային. մինչդեռ Սրուանձտեանի մասին մենք տուել ենք մի ընդարձակ յօդուած (Ազգ. Հանդ. IX գ.), Շերենցը մեր աշխատակիցն է (անդ), Գ. Հախվերդեանի ժողովածուի բ. հատորը մենք ենք հրատարակել, «Արուիւն իրըն ազգագրագէտ» յօդուածը մենք ենք սկսել *), Պօշեանի մասին տպուած յօդուածում մենք ենք առաջարկել իրան «բոլոր վէպերի միջից հանել ազգագրութեան վերաբերեալ բոլոր նիւթերը և նրանց որոշ սիստեմով դասակարգելով հրատարակել»։ Մենք ենք հրաւիրել մի խումբ՝ կազմելու գոնէ ռուսահայ պարբերական մամուլի ամբողջ բովանդութեան ցանկը, որից յետոյ մասնաւորելու ենք ազգագրական մասը, և որի մասին հրատարակուած է «Новое Обозрѣніе» լրագրի մէջ։

Անաչառ քննադատը մեզ կը դատապարտէր միայն նրանում, որ մինչև հիմայ չենք վերջացրել մեր այս տեսութիւնը, որին միայն մի պատասխան կարող էինք տալ, այն է, որ գործը չափազանց դժուար է, քանի որ պարբերական մամուլի նիւթերի ցանկը չկայ. եթէ իւրաքանչիւր խմբագրութիւն առանձնապէս հրատարակէր իր թերթի նիւթերի ցանկը, ինչպէս այդ արել է «Բազմավէպ»-ը յիսուն և «Մուրճ»-ը մի քանի տարիների վերաբերութեամբ, այն ժամանակ մենք հնարաւորութիւն կ'ունենայինք գործը շարունակելու և ոչ թէ խումբ կազմակերպել նախ այդ ցանկը կազմելու։

2) Արժ. Ղըլտեան ծաղրում է մեզ, որ ասել ենք, թէ «Վարդաբլուլից դէպի արեւելք... գտնւում է կալուածատէր Սան-Աղեանի գեղեցիկ, եւրոպական ճաշակով կահաւորուած տունը, որի առաջ տարածւում է ընդարձակ պարտէզ», մինչդեռ ինքը չար դիտաւորութեամբ խեղաթիւրել է այդ, առաջ չբերելով դրա շարունակութիւնը... «կալուածատէրը շերամ էլ է սկսել պահել, որ այս գաւառում առաջին և գրեթէ յաջող փորձն է։ Մեղուապահութիւնը նոր եւրոպական ծելով է, կալուածատիրոջ որդին՝ Լևոնը՝ յայտնի է իր հնարած ջուր բարձրացնելու մեքենայով և «եքկրագործական գործիքներ» խորագիրը կրող աշխատասիրութիւնով... Շնորհիւ Սան-Աղեանի և ճեմարանաւարտ քահանայի գիւղացիները առել են երկրագործական եւրոպական գործիքներ» **), Մնում ենք դարձեալ այն խոր համոզման, որ միշտ պիտի յիշել այն պատճառները,

*) Ազգ. Հանդ., V գ., եր. 408.

**) Ազգ. Հ., VII և VIII գ., եր. 359.

որոնք ազդոււմ են, փոփոխութեան ենթարկում գիւղացիներէ երկրագործական, մեղուապահական, պարտիզպանական և այլ գործիքները, որոնց ուսումնասիրութեամբ զբաղոււմ է ազգագրութիւնը, չխօսելով դեռ՝ որ Ազգագրական Հանդէսը, հետեւելով մեր մամուլի պահանջին *), որոշել է քանի որ աշխարհագրական և պատմական առանձին հանդէսներ չկան՝ կարելոյն չափ փոխարինել դրանց:

Իր այս փոքրիկ յօդուածում արժ. Ղլրտճեանը ցոյց է տուել իր գրական էթիկան, ուրիշի տեսութիւններն իրան վերագրելով: Սթենիկի առեանգման, Արտաշիսի հարսանիքի և սրանց մասին յայտնած կարծիքները պ. Մ. Արեղեանին են, որ յայտնել է մեր յօդուածի լոյս տեսնելուց 3 տարի յետոյ պ. Գ. Նալաթեանի «Армянский Эпосъ» գրքի աոիթով և որոնք դեռ վիճելի են, ուստի և այդպիսի մի հակիրճ պատասխանի մէջ չեն կարող վերաքննուիլ **):

Հ. Ղ. մեղանչոււմ է ճշմարտութեան դէմ, ասելով թէ «պատմական տեղեկութիւններն, օրինակ մեկեքների մասին, ինչպէս և այն մասն, ինչ նա քաղել է Ալիշանից (Սիսական) և ուրիշներից, նորութիւններ չեն հայ գրականութեան մէջ, այլ պարզապէս արտագրութիւններ», քանի որ «Մեկեքների հասարակական և իրաւաբանական սովորութիւններ ***)-ի մասին հայոց գրականութեան մէջ ոչինչ չկայ, այդ բոլորը եւ հաւաքել եմ ժողովրդական աղբիւրներից, ինչպէս և՛ Սիսիանի և Գանձակի մասնը մեկեքութիւնների մասին եղած տեղեկութիւնները: Կիւրիկեան թագաւորութեան ամբողջական պատմութիւնը ****) առաջին անգամ է լոյս տեսել հայոց գրականութեան մէջ, որը քաղել եմ գլխաւորապէս վրաց մատենագիրներից: Բորչալուի տեղագրութիւնը ամբողջովին չէ տուել ոչ յաւերժայիշատակ Ալիշանը և ոչ մի ուրիշը, թէպէտ և մինչև անգամ եթէ նա տուած էլ լինէր, և եւ նորիսկ բառացի թարգմանած լինէի աշխարհաբար, դարձեալ չէր կարող «անպէտք» համարուիլ:

Թուելով, թէ ինչ բաների մէջ են մայրիշխանութեան հետքեր նշմարոււմ, արժ. Ղլրտճեանը եզրակացնում է, որ մենք այդպիսի հետքերից ոչինչ չենք տուել, մինչդեռ իր յիշածներից բոլորը, բացի մինից, կան իմ աշխատութիւնների

*) «Մշակ» 1897:

**) Արեղեան՝ «Հայ ժողովրդական առասպելները» 1899. առաւելապէս 306 և յաջորդ երեսները:

***) «Աղղ. Հանդէս», V գ., եր. 249—266.

****) «Աղղ. Հանդ.», VII և VIII գ., եր. 312—332.

մէջ.—Ծծագնի մասին՝ IX գ., եր. 224, հարս գնալիս մօր ծծե-
րը համարուելը՝ VI գ., եր. 256, ժողովրդի «հալալ կաթնակեր»-
մի հարսի կամ աղջկայ ասելը՝ VI գ., եր. 256, այն ասացուած-
քը, թէ «մէրը տես, աղջիկն առ»՝ IX գ., եր. 214, աղջիկն ուզելիս
քրոններին հարցնելը՝ II գ., եր. 120 և VI գ., եր. 256, հարսին նա-
նատելիս մօրը մէջ բերելը՝ I գ., եր. 282., II գ., եր. 159 (սկե-
սուրը ասում է հարսին՝ «քա մօր մարդը մեռնի»):

Արժ. Ղլրտճեանը ցանկացել է ուղղել այն տեղերը,
որ չէ նասկացել. այսպէս՝ նա պատճառաբանում է, թէ Փամ-
բակու գետակը... Դսեղի տակ ընդունելով իր մէջ Ջալալ-օղ-
լու վտակը, կոչւում է Դեբետ. մինչդեռ մենք ասել ենք, որ
կամենական—այսինքն այդ Ջալալ-օղլու վտակը, որ յառաջա-
նում է Մոկրիա լեռներից սկիզբն առնող Ջիլդի և Ղարաղալա
վտակների միախառնումից, Ջալալ-օղլու մօտ ընդունում է
այսինչ այնինչ վտակները և ապա միանում Փամբակ գետի
հետ, որ գալիս է Երևանեան նահանգի Արեւսանդրօպոլի գա-
ւառից, ընդունելով Քեօլագիրան և Չանախչի կամ Ալեքեքսի
վտակները: Իսկ թէ Դեբետ-գետը այժմ կամենկա էլ է կոչ-
ւում (որ Ղլրտճեան հերքում է), ապացոյց այդ երկրացի և
տեղին շատ լաւ ծանօթ Երկայնաբազուկ-Արղութեանի վկա-
յութիւնը. «Дебедачай или Борчала правый притокъ Храма,
известный еще подъ названіемъ Каменки. Рѣка эта образу-
ется слияніемъ рѣкъ Джилги и Каракалы, берущихъ начало
на Мокрыхъ горахъ» *). Միևնոյնը ասում է և՛ Երիցեան.
«Соединеніемъ этихъ водъ образуется... рѣка Дебеда, извест-
ная у русскихъ поселянъ подъ характернымъ названіемъ Ка-
менки» **).

Ինչ վերաբերում է նրան, թէ ես Փարվանան շինել եմ
Թափարաւան, Մթին սարերը՝ Մոկրիա սարեր, այդ ես չեմ
«շինել», այլ որպէս նոր անուններ՝ հնի հետ միասին փոփոխա-
կի գործ եմ անել (տես I գր., 130 եր. Ծովակ Հիւսիսոյ, Փար-
վանա, Թափարաւան). իսկ թէ Ծենկօն դառել է Ցենկօ, Արջա-
գլուխը՝ Արգագլուխ, Փոկան՝ Պոկա և այլն, սրանք դժբախտա-
բար վրիպակներ են:

Արժ. Ղլրտճեանի համար մեր ժողոված արձանագրութիւն-
ներն էլ նշանակութիւն չունին, մինչդեռ դրանք շուտով կը
տպուի պրոֆ. Մառի կազմած «Corpus Arm. Script.» մէջ:

*) «Районъ Тифлиско-Каресско-Эриванской желѣзной дороги»,
գր. 26.

**) Ерицовъ: «Экономическій бытъ гос. крестьянъ Борчалин-
скаго уѣзда».

Արժ. Ղլրտճեանը չի հաւատում, թէ վարանդացի և մանաւանդ զանգեզուրցի կիներ «և հնձում է, և խուրճեր կապում, կալը կրում, աշան անում, կալսում, թեղում, ցորենը ջրաղաց տանում, այգում աշխատում (այս բոլորը ինքը տեսել է)»: Այո, տեսել եմ, և ոչ միայն ես, այլև այս կողմերի տնտեսական դրութիւնը ուսումնասիրող պ. Զելինսկին էլ է տեսել.— «Перевозкою хлеба, большею частью, занимаются дѣти и женщины; послѣднія, въ Сисіанскомъ участкѣ, помогаютъ мужчинамъ и въ жатвѣ, и молотбѣ, а равно и въ уборкѣ масличныхъ и бобовыхъ растений, которыя выдѣргиваютъ руками *).

Արժ. Ղլրտճեանը ծանօթ չէ ո՛չ մեր հին եւ ո՛չ նոր, մանաւանդ ազգագրական գրականութեան: Ապացոյց՝ նա ասում է. «ոչ էլ ննջեցեալի նաշի չորս բոլորը ողբացողներից մէկը կոչւում է «ողբոց մայր», մինչդեռ եթէ նա գոնէ Փաւստոս Բիւզանդին ծանօթ լինէր, այդպիսի մի անհեթեթ նկատողութիւն չէր անի, քանի որ այնտեղ կարգացած կը լինէր. «Ապա իբրև մեծ իրքն համարձակ յայտնեցան ի լսելիս ամենեցուն... եղև նա (Փառանձեմ) մայր ողբոցն, և ձայնարկունքն ամենայն ի ձայն ողբոցն սկսան նուագել զիրան տրփանացն Տիրիթայ, զակն դնելն, զքսութիւն, զհնարս մահու նիւթել» ևայլն **):

Ազգագրական գրականութեան ծանօթ չլինելն էլ հրեւում է նրանից, որ նա հերքում է այն սովորութիւնը, որ երբ տան մէջ մէկի մեռնելուց յետոյ հիւանդանում է մի ուրիշը, ասում են, թէ սեռելը ուրիշներին էլ է տանելու, ու այդ դէպքում ենթադրում են, թէ նա չէ մեռած, և ստուգելու համար «իբր թէ բաց են անում գերեզմանը, ննջեցեալի գլուխը ջախջախում կամ մի մեխ խփում գլխին, մէկն էլ սրտին: Մի քանիսն էլ մեռելի սրտից մի կտոր կտրում և հիւանդին են տալիս, որ ջրով ընդունէ և առողջանայ» (Մուրճ. № 3.): Բացի այն, որ են այդ անողների ամբողջ անունն եմ յիշել, ինչպէս Փիփ գիւղի տէր-Միքայէլինը, որ դեռ կենդանի է, հետևապէս և եթէ սոստ լինէր, նա կարող էր դատ բանալ իմ դէմ, այլև այդ մանրամասն նկարագրուած է գանձակեցի Ն. Մամիկոնեանի «Զհասութիւն» գիւղական կեանքից վէպի մէջ, եր. 19.—«Հանգուցեալը հոգադարձ լինելով հո էր եկել իւրայիններին իւր

*) Зелинскій: «Изсѣдованіе экономическаго быта государственныхъ крестьянъ въ Зангезурскомъ уѣздѣ», стр. 86:

**) Փաւստոս Բիւզանդ, գլ. Դ., գլ. ԺԵ.

Պուշտը քաշելու Դրա մէջ կասկած չէր կարող լինել, դա առաջին դէպքը չէր... նորածնին տանելով հիմիկ էլ Ապրիեսի ետեւիցն էր եկել, որ յետոյ մնացածներին էլ կրէր տանէր: Ուստի նրա չար խորհուրդը խափանելու համար վճռեցին դիմել այդ տեսակ դէպքերի համար գոյութիւն ունեցող մի հատ միջոցին, այն է, գիշերը հանել նրա մարմինը և խալոյ-կում ալրել... Արին և միայն մի պտղունց մոխիր թաշկէնի ընջում կապած բերին դրին հիւանդի գլխատակին»:

Այս մասին խօսւում է նաև Նազարեանի «Նախապաշարմունք» գրքում (եր. 54.) — «Երբ միևնոյն նոր հանգուցեալը երազւում է մի քանի հիւանդների, և եթէ նոքա էլ շուտով մեռնում են,—բարեկամները հանում են գերեզմանից երազուող հանգուցեալի դիակը: Գիւղի իւրաքանչիւր տնից մի մի փայտ են դուրս բերում և դիզում են նրա գերեզմանի մօտ: Յետոյ վառում են այդ փայտակոյտը և դիակն այրում նրա մէջ: Մոխիրը կրկին թափում են գերեզմանը և քահանան՝ ժողովուրդի ազդեցութիւնից ստիպուած՝ նորից նրա վրայ թաղման կարգ է կատարում» (Ուզունթալա) *:

Ձկամենալով միաւրի յիշել այս մասին գրականութեան մէջ եղածները, առաջ եմ բերում մի երկու նախապաշարմունք, որ այս միևնոյնի մնացորդն է. «Ծերունի հանգուցեալի կըրծքում մէկ միլ (երկաթեայ կամ պողպատեայ թել, որով գուլպայ են գործում) են ցցում. մէկն էլ դնելով դագաղում ասում են. «Դնա, քու աչքը քեզ վրայ ըլի, մեզ վրայ աչք չունենաս: Կամ՝ միևնոյն նպատակով երազողը հանգուցեալի գերեզմանի վըրայ մէկ ածխակոթ է տնկում և ասում. «Էս ա քու փայն, էլ ինձ չերևաս» **):

Արժ. Ղըրտմեան լեզուաբանական դիտողութիւններ է անում, մինչդեռ ինքը եզակին յոգնակուց չէ կարողանում տարբերել: Ապացոյց՝ նա ասում է, թէ «թորն ըս քիս»-ը սխալ է, պիտի լինի «թորն ըք քիս», չհասկանալով, որ առաջինը նշանակում է «հօր ես գնում», եզակի է, իսկ երկրորդը՝ դրա յոգնակին ***). նա ասում է, թէ ես իբր խոռնել եմ քու և քա ձեքը միևնոյն բարբառում, չհասկանալով որ երկուսն էլ գործ են ածում, միայն իւրաքանչիւրը իր յատուկ տեղը. «այսպէս «քա»-ն դրւում է «հայր» և «մայր» բառերի հետ, այն

*) Մի հայ վարդապետ մեզ պատմեց, որ ինքն ակնատես էր եղած ալրելի դէպքերի Ուզունթալայում: Եան. Յ. Նազարեանի:

**) Նազարեան՝ «Նախապաշարմունք». 1878 թ., եր., 51.

***) Տես Паткановъ: «Исследование о диалектахъ Арм. яз.», եր. 69:

էլ երբ սրանք սեռական հոլովով են գործածուած, օր.՝ «քաւ մօր, քաւ հօր», ինչպէս մենք ենք ասել. չի կարելի ասել «քու մօր, քու հօր»։ Այս նրբութիւնը դիտել է տուել և գեր. Մ. վ. Բարխուդարեանցը իր «Պըլը-Պուղի»-ի բառարանի 189 երեսում դնելով «քաւ հօր»—«քու հօր» բացատրութիւնը։ Հ. Ղլրտճեան չգիտէ նաև, որ մեր շատ գաւառների հետ Ղարաբաղը ևս բազմաթիւ ստորաբարբառներ ունի *). Նոյնիսկ միմիանց կից գիւղերէ բարբառները, որ ըստ երևոյթին միեմոյնն են, ոչ միայն բառերով, այլ և իր քերականութեամբ տարբերուած են, օր.՝ Ազուլիսում ընտրուած են ասում են՝ ընտրում ըմ, իսկ Յիւնայում, որ նրանից 15 վերստ հեռու է և միեմոյն զով ժողովուրդն է՝ պնտրում ըմ են ասում**): Ի՞նչպէս կարելի է հաւաքողին մեղադրել, թէ այս ինչ բարբառով հաւաքուած երգերի, բարեմաղթութիւնների և խօսակցութիւնների մէջ մէկ այս ձևն է գործածուած, մէկ այն։ Ինեւ չենք խօսում ուրիշ քննադատի—պ. Վանցեանի մասին ևս, որ ինձ մեղադրում էր, թէ մշեցիների և ախալքալաքցիների բարբառները միմիանց եմ խառնել, աղաւաղել, մինչդեռ ես հարադատութեամբ գրի էի առել Ախալքալաքի Դիլիֆ գիւղը վերաբնակած և սրանց բարբառի ազդեցութեան ենթարկուած մշեցիների երգերը։ Այս պատճառով և՛ չենք ընդունում, որ մեր յառաջ բերած բառերը սխալ են, գուցէ զանազան գիւղերում ուրիշ կերպ են գործածուած, այդ բոլորովին ուրիշ խնդիր է։ Այդ բառերը մեծ մասամբ քաղել եմ Շիրիշ Երզնկեանի հաւաքածուից (ինչպէս յիշել եմ), որ հաղթատեցի է, երկար տարիներ այնտեղ անցկացրած, և նախքան տպագրելը ցոյց տուել գիւղատնտես Զաւարեանին և Սահակեանին, որ տեղացիներ են, մինչդեռ արժ. Ղլրտճեանը իր բոլոր դիտողութիւնները հիմնել է Թիֆլիսում նստած։ ***)

Արժ. Ղլրտճեան նիւթը ուսումնասիրութիւնից չի տար-

*) «Здѣсь (въ Зангезурскомъ уѣздѣ) чуть ли не столько нарѣчій, сколько округовъ или отдѣльныхъ селеній.» Зелинский: «Экон. бытъ гос. крестьянъ въ Занг. у.» стр. 10:

**) Ս. Սարգսեան՝ «Զօկերի լեզուն», եր. 46. ես օրինակը դիտմամբ Ազուլիսի բարբառից եմ բերում, որպէսզի Ս. Սարգսեանի պէս հեղինակաւոր լեզուագէտի ասածը զոնէ ընդունէ Հ. Ղլրտճեանը:

***) «Ազգաբաղան Հանդիսի» խմբագրութիւնը ստացաւ մի բանի պարոններից յօդուածներ, որոնց մէջ հերքում էին Հ. Ղլրտճեանի ընդհանրատութեան շատ կէտերը. բայց որովհետեւ մեր այդ հանդիսի բնաւորութիւնը թոյլ չի տալիս պոլեմիկայի մէջ մտնելու, ուստի անկարող եղանք հրատարակել այդ յօդուածները։ Միայն այստեղ կարելոր ենք համարում առաջ բերել մի երկու նկատողութիւն Վարանդայի մասին Հ. Ղլրտճեանի դրածոների

ընտրում, չի հասկանում, որ գիտութեան համար հաւաքուող նիւթերի մէջ առանձին, մեծ նշանակութիւն տրուում է ժողովրդի բացատրութիւններին, և հաւաքողի բացատրութիւնները գիտական տեսակէտից տեղի չեն, որովհետեւ եթէ համեմատութեան համար դեռ նիւթեր չկան, վաղաժամ է, իսկ եթէ կան, կարիք չկայ նիւթն ու ուսումնասիրութիւնը միմիանց խառնել, պէտք է անկախ ուսումնասիրութիւն կատարել, արժ. Ղլրտճեան գոնէ ի նկատի առնէր Անդրկովկասի արքունի գիւղացիների տնտեսական դրութիւնն ուսումնասիրող յանձնախումբի գործունէութիւնը. սա նախ և առաջ որոշ, միևնոյն ծրագրով նիւթեր հաւաքեց առանձին գաւառ-գաւառ և յետոյ տուեց իր «СВОДЪ» ուսումնասիրութիւնները, ոչ առաջինի մէջ ուսումնասիրութիւն և ոչ երկրորդի մէջ սոսկ նիւթ մտցնելով։ Մեր նպատակն էլ նոյնն է, մենք դեռ որոշ, միևնոյն ծրագրով նիւթեր ենք հաւաքում, յուսալով որ մեզ և կամ մի ուրիշին անշուշտ կը յաջողուի ուսումնասիրութիւններ կատարել, քանի որ առանց բաւականաչափ նիւթ ունենալու անհնարին և գիտական արժէքից զուրկ կը լինի ուսումնասիրութիւն կատարելը։ Այս տեսակէտով և՛ արժ. Ղլրտճեան սաստիկ սխալուում է. այդ նիւթի մէջ եղած բացատրութիւնները՝ (ինչպէս օլադի պաշտամունքը) «ոչ թէ ինչպէս պ. Լաւայեանն է գրում, նրա համար է, որ նա «եկեղեցուց բարձր է. կերակրում, տաքցնում, և մաքրում է»,—

գէտ պ. Ա. Աթայեանի յօդուածից, անլացնելով, որ պարոնը բնիկ վարանդացի է — «Պ. Լաւայեան գրում է՝ «հարուր» (հօրաքոյր), որ միանգամայն ճիշտ է, արժ. Ղլրտճեան ուղղում է «հարու», որ հիմնովին սխալ և վարանդայում կատարելապէս անծանօթ մի բառ է։ Պ. Լ. գրում է՝ «մկրկոչէք», որ ճիշտ է, իսկ արժ. Ղ. ուղղում է «մկրկանչ», որ բոլորովին սխալ է։ Պ. Լ. գրում է «բաբա» (հայր, գլխաւորապէս իրբն կոչական), արժ. Ղ. այդ սխալ է համարում՝ և ուղղում է «ապա»։ Ճիշտն այն է, որ դրանցից ոչ մէկն էլ սխալ չէ, երկուսն էլ գործ են ածուում, բայց անկի գործածականը պ. Լ.-ի օրինակն է։ Պ. Լ. գրում է՝ «թընըխարաւ», որ ճիշտ է, հ. Ղ. ուղղում է՝ «թըրըխարաւ»։ Ոչ մի վարանդացի հրէք չէ կարող լսած լինել մի այդպիսի «թխած» բառ, եայն եայն։

... «Վարանդայի գիւղերում գոյութիւն ունին յատուկ «սոք, ասոդ» (սուգ ասոդ, սզացոդ) կանայք, որոնք հրաւիրուում են ամեն մի մեռած գիւղացու վրայ «սուգ ասելու», ազգական լինի ննջեցեալը սուգ ասողին, թէ չէ,—այդ միևնոյնն է. ամենքը սուգ ասել չեն կարող, այլ լալիս են և ձայնակցում սուգ ասողին. երգելով սզալն առանձին շնորհք, ընդունակութիւն է, եթէ կարելի է ասել,—մասնագիտութիւն է։

Ծիծեռնակի պաշտաման մասին պ. Աթայեան երկարօրէն պատմում է, առկայն տեղի սղութեան պատճառով առաջ չենք բերում, մանաւանդ որ այդ բուական տարածուած է, և մենք զարմանում ենք, թէ ինչպէս հ. Ղլրտճեանը ծանօթ չէ դրան։

երևի միջատներէց: Ո՛չ, այդպէս չէ, դրա համար չէ»,— իմը չեն, այլ ժողովրդէինը. ես պարտաւոր էի այդ յառաջ բերել, որովհետեւ, տեսէք թէ դա որքան նմանութիւն ունի մեր նախնիների և վայրենիների տուած բացատրութեան հետ և որքան անհրաժեշտ են ուսումնասիրութեան համար.— «Можно бы назвать его (огонь) человеком потому, что какъ у человека, природа у него двойкая, физическая, онъ... готовить ѣду, питаетъ тѣло, даетъ человеку чистоту» ևայլն *):

Եթէ արժ. Ղլըտճեան ազգագրական պատրաստութիւն ունենար, կը հասկանար, որ Հանդիսի բ. գրքի 140 երեսում նորահարսը օջաղը համբուրելու և տան ծերունիներան օրհնելու նկարագրութիւնից յետոյ դրուած «որքան նմանութիւն ետրուսքների սովորութիւններին» ծանօթութիւնն արդէն ցոյց է տալիս, որ ես ծանօթ եմ օջաղի պաշտաման, և միայն չեմ ցանկացել սկսնակի պէս նիւթի մէջ ուսումնասիրութիւն խառնել, և եթէ «Թոնրի պսակը» «օջաղի պսակից» տարբերել եմ, այդ ոչ թէ նրա համար է, որ ես «չեմ հասկանում, որ օջաղն ու Թորոնը միևնոյն օջաղի գաղափարն են ներկայացնում», այլ որովհետեւ «Թոնրի պսակը» աւելի նախնական եմ համարել, իսկ «զեննիսի պետի» օջաղի վրայ կատարուող պսակը աւելի ուշ, երբ օջաղի պաշտամունքը միախառնուել է հոգու և նախահօր պաշտաման հետ: Բաւականանալով այսքանով՝ մենք խնդրելով խնդրում ենք, որ մեր մասնագէտները քննեն մեր գործը, առաւելապէս ուշադրութեան առնելով մեր ծրագիրը. և նրա իրազօր-ծելու եղանակը, որպէսզի միւս գաւառներում նիւթեր հաւաքելիս մենք կարողանայինք բաներ բաց չթողնել, քանի որ նրանք այնպէս արագութեամբ կորչում են. ուսումնասիրութեան համար շատ ժամանակ կայ և միշտ կը լինի, պէտք է շտապել նիւթերը կորստից ազատելու:

Ե. ԼԱԼԱՅԵԱՆ

ՆՈՐ ՄՏԱՑՈՒԱԾ ԳՐԳԵՐ

- 1) Մ. Գօր'կիյ՝ «Դանկօի սիրտը», Թարգ. Ա. Աթայեան, Թիֆլիզ, 1904, գ. 3 կ.:
- 2) Մ. Գօր'կիյ «Իմ ուղեկիցը», Թարգմ. Ա. Աթայեան, Թիֆլիզ, 1904, գ. 10 կ.:

*) «Гражданская община Античного міра», Фюстель де Куланжа, Կր. 31: